

ՄԱՐԿԻ

ՀԱՅԿԱՆ ԳԵՂԱՐԱՅԻՆ ՄԱՐԿԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиς, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լուրով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պէտք է ազգայնականութեան շահերն աչքի
առաջ ունենալ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
մուլ. Մի հետադարձութեան առիթով. Թուրքա-
ւոր սէր. Երկրաշարժից փնտրվածների օգտին.
Օպերային ներկայացումները. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.
— ՀԵՌԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բազուկի վախճանալիքներ.

ՊԵՏԱԿ ԵՎ ԱԶԳԱՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՀԵՐԱՔԻՆ
ԱՌԱՋ ՈՒՆԵՆԱԼ

Այսօր, մարտի 1-ին, բացվում է Թիֆլի-
սում մի ժողով, որի նպատակն է խոր-
հրդակցել նախնային բնական մեծ հարս-
տութիւններից մէկի վիճակին, այն է ան-
տառնային տնտեսութեան վիճակին մասին:
Ժողովին պէտք է մասնակցեն նախնային
բոլոր մասերից հրաւիրված անտառագետ-
ներ: Անցնել տարի կայացաւ առաջին այդ
տեսակ ժողովը, այժմ տեղի ունի երկրոր-
դը: Այդ ժողովները միջոցով յոյս կայ ան-
տառային տնտեսութեան գործի մէջ մրցոյ-
նել շատ գործնական տարրեր, օգտվելով
տեղական գիտողութիւնների և փորձի
տուած արդիւնքներից:

Պէտք է նկատել, որ անտառը Կովկասի
մասին լեռնային և հարաւային մի երկրում
ունի կատարելու աւելի մեծ դեր, քան
գիւղերը: Ուստի անտառի հիւսիսային նախնայ-
նութեամբ: Նա ոչ միայն տալիս է վառելու
և շինելու նիւթ, այլ և գեղեցիկ մի
միջոց է արգելաւանդել գործնական ապառա-
ժութեան և կորստի լեռնային ծրագրերը, որոնք
անյարմար են ուրիշ որ և է մշակութեան
համար: Այդ մի կողմից: Իսկ միւս կողմից,
որ շատ կարեւոր է, լեռնային անտառը իր
գոյութեամբ դեր է խաղում և մոտենալ
ապրում վտակներին, աղբիւրներին և գե-
տակներին, ջուր է մատակարարում ներքև
գտնվող դաշտերին, այգիներին և պարտեզ-
ներին, որոնք առանց ոռոգվելու անկարող
են կենք տալ բուսականութեան:

ձիւղ է, կանոնաւոր և խելացի եղանա-
կով կազմակերպել անտառային տնտեսու-

թիւնը հեշտ չէ, բայց նա մի կարեւոր
անհրաժեշտութիւն է: Անտառները մեղա-
նում փչացել են անխնայ կտորեկուց և
շատ անտառապատ շրջաններ բոլորովին
զրկվել են ծառից և փայտից: Մինչդեռ
անտառների կանոնաւոր կտորեկուց երբեք
չի փնտրի անտառային հարստութեանը,
որովհետեւ կտորեկուց անտառամասի փո-
խարէն նրա մի ուրիշ մասը ենթարկվում
է յատուկ հոգատարութեան և նրա վրա
նորոգվում է անտառը: Այդպիսով անտառ-
պահպանական չէ նշանակում նրանից
չօգտվել, իսկ կանոնաւոր նրան կտորեկուց
չէ նշանակում նրան ոչնչացնել:

Սակայն նոյն իսկ այն դէպքում, երբ
յայտնի է թէ որտեղ և ինչ քանակու-
թեամբ պէտք է անտառ կտորեկուց, հարց է
ծաղում, թէ արդեօք ո՞ւմ պէտք է յանձ-
նվի անտառի կտորեկուց— առանձին գրաւա-
տէրերին, թէ գիւղական ազգայնա-
կութեանը: Առաջին դէպքում անտառի
կտորեկուց ստացած եկամուտը դառ-
նում է մի քանի անձանց սեփականութիւն,
իսկ երբ գիւղացիներն են իրանց ձեռքն
առնում, այն ժամանակ օգուտը բաժան-
բաժան է լինում հարկւրաւոր և հազա-
րաւոր բնակիչների մէջ և նրանց անտե-
սութեանը որոշ չափով օգնում:

Տեղական անտառագետները, գլխացա-
ւանքի իրանց ազատ պահելու համար,
գերադասում են գործ ունենալ մի քանի
անձանց հետ, կամ կազմում են այնպիսի
կարգ ու կանոններ, այնպիսի ձևակաւ-
թիւններ, որոնք շատ անյարմար են գիւ-
ղացիների համար և դարձնում են անտառ
չահագործելու պարագայում համարեա
անկարելի:

Որքան ուրախալի կը լինէր, եթէ նա-
խնային զանազան մասերից ժողոված ան-
տառագետները կարողանային գիւղացինե-
րին գիւրդութիւններ տալու մի ծրագիր
մշակել: Այդ ծրագիրը յետոյ կարելի էր,
որոշ փոփոխութիւններ մտնելով, գոր-
ծադրել և ամբողջ Անդրկովկասում:

Խնտիկութեան զգացմունքների կատարեալ
թիւնը չէ: Մասային, ամբողջ տարրային
չարժում է: Այս խայտալէտ ամբողջ մէջ կը
տեսնէք նախկին արհեստաւորներ, որոնք ի-
րանց գաւառ քրտնալքով էին երգում երբեմն,
նախկին տեսուչներ, ուսուցիչներ, որոնք ժողով-
դի անունով էին գործում, նրա ցաւերը ող-
բում և նրանից գիտակցական, կուլտու-
րական տարր պարտաւորելու ճգնում, ատկու-
թիւն էին քարոզում, մշակին, բանտորին հա-
լածողը դէմ է Այստեղ են բանաստեղծներ, հրա-
պարակախոսներ, որոնց գրչի տակ պլուտոկրա-
տիան մի անամօթ տղուկ էր, որոնց քարո-
զով կապիտալիզմը մի անուշիկ հիւրաւ էր, մի
տարր, որ ամեն բան ապականում, սրբապղ-
ծում է: Այստեղ են բարեգործ տիկիներ, ո-
րոնց մօտ գրական գործողներ ակումբ էին
կազմում և նրանց առաջ թափում իրանց շո-
ղոքորթութիւնները, առանց որոնց գաւառում
ներկայացում, գործ էր աշխուղում: Միացել են
գրանց գիւղական գործիչներ, որոնք հարստա-
հարիւնների դիմակն էին պատում, այստեղ են
հին գործիչներ, «հասարակական գործերի մո-
նիթորներ», հոգեւորականներ, որոնք ճշո-
ճում էին խղճի դատաստանի մասին Իրաւա-
բաններ, բժիշկներ, ամեն գոյնի, ամեն կու-
սակցութեան, այժմ բոլորը միացած, մոռացած
նախկին «մանր-թուն» հաշիւներ, ձեռք ձեռքի
տուած գործում են: Ամենքին կապում է մի
գործը, մի նպատակ... շուտ հարստանալ, ինչ
միջոցով էլ դա լինի:

Կազմվել է մակէթներ և կուրատորիա ապ-
րոշների մի ամբողջ վեճակ. «նրանց համար
գոյութիւն չունի էտիկա». նոստրական թըլ-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Դարձեալ միջազգային հրապարակում երե-
ւան եկաւ չարիւթեան զգուշիկ կերպարա-
նքը. դարձեալ ազգերի արեւը, տանջանքները,
ամենատուրը զգացմունքները վաճառականական
հաշիւների զոհ են դարձած. և որքան ան-
հրապոյր, որքան անտանելի է մարդկութիւնը,
երբ նա սկսում է գերեզմանները շահագործել
իր նիւթական գծում հաշիւների համար: 1895
— 1896 թւականներից սկսած՝ լուսաւոր, ա-
զատ, քրիստոնէայ Եւրօպայի իր պատմութեան
մէջ մտցրեց շատ և շատ այդպիսի չարիւթա-
կան ամօթայի քաջագործութիւններ: Բայց ա-
նա սկսվեց անգլո-տորանալական պատերազ-
մը. հասարակական կարծիքը իր արտայայտիչ
բերանի— մամուլի միջոցով սկսեց դատապար-
տել ծովերի վիթխարի թագուհուն և պաշտ-
պանել ու պաշտել նրա անկուշտ բերանի զոհ
դարձած փոքրիկ ազգը: Միահամուռ, համա-
տարած երեւոյթ. նա ցոյց էր տալիս— եւ մենք
արձանագրեցինք իր ժամանակին— թէ մարդ-
կութեան մէջ չէ մեռնում արդարութեան
զգացմունքը, թէ թոյլի, խեղճի պաշտպանու-
թիւնը, իրեւ մի գաղափար, որ պաշտում է
կարերի սկզբից, որ մեր կրօնի հիմնաքարն է
կազմում, դեռ չարանալում է ապրել մեր օ-
րերի կոպիտ նիւթապաշտութեան, հոգեվաճա-
ռութեան մէջ: Կարելի էր կարծել, որ մարդը,
այնուամենայնիւ, մարդ մնալու հակումն ունի,
որքան էլ նրա գրեւոր ու սիրտը թաղված են
ոսկու պաշտամունքի, խելու և իւրացնելու,
կողոպտելու և հարստահարելու տենչերի մէջ:
Բայց... իդէալիստները, հաւատացողները պէտք
է հիասթափվեն և այժմ. չը կայ տոկոսնու-
թիւն այն զգացմունքների մէջ, որոնց մարդ-
կութիւնը մի մի աշխարհ է հանում ցոյց տա-
լու համար, թէ ինքը կորած չէ յաւիտեական
գաղափարների համար. մէկ էլ տեսնում էք
հանդէս եկաւ այդ զգացմունքների անամօթ
ոստահարութիւնը, տեսնում էք փոխվեց մար-
դը և չէք կարողանում զսպել ձեր զգուշանքը,
երբ պարզվում է ոտնահարողի, փոփոխողի
կերպարանքը. դա հաշիւն է, գծում, անհոգի
հաշիւը, հոգու և մարմնի տէրը: Խեղճ բօշո-

ները մի քանի ժամանակ առաջ ֆրանսիացի-
ները, գերմանացիները հրճուանքի և հիաց-
մունքի առարկան էին Բայց բաւական էր, որ
գնեւորալ Բօքսթոն 40 հազար դոլարով 4000
մարդ չընկալուէր մի գետի ձորում և իր 60
թնդանօթները կրակը կենտրոնացնելով այդ մի
բուն մարդկանց վրա, 10 օր շարունակ մա-
քաւելուց յետոյ հարկադրէր նրանց անձնա-
տուր լինել— և ահա բոլոր այդ բացար-
ձակ յաղթանակը փոխում է ֆրանսիացու և
գերմանացու լեզուն: Դուք մեր հեռագիրներից
գիտէք թէ ներկայ պատերազմի ընթացքում
ինչ չափերի հառաւ ֆրանսիական տակութիւ-
նը Անգլիայի դէմ. դիտէք, որ ֆրանսիական
սանձարձակ մամուլը այն տեղին հասաւ, որ
նոյն իսկ իր ծաղրանկարների առարկան դարձ-
րեց Վիկտորիա թագուհուն ոչ միայն իրեւ
թագուհու, այլ և— որ ամենազգուշիկն է— իւր-
բեւ կնոջ. չէք մոռացել, անուշտ, որ Պարիզի
անգլիական դեսպանը հարկադրված եղաւ մի
միջոց բողոք յայտնել այն բանի դէմ, որ այդ-
պիսի կարիկատուրիստներից մէկը նոյն իսկ
պատուաւոր լեզուներ չընչաւն ստացաւ Բայց
այժմ... Հօ ամբողջ աշխարհը դիտէր պատե-
րադմի սկզբում, որ համաշխարհային պետու-
թիւնը իր անշղթ ոյժով վերջ էր վերջը պիտի
ձմէ երկու փոքրիկ հանրապետութիւնները:
Ահա այժմ, ըստ երևոյթի, եկել է այդ ժա-
մանակը, եւ բօշոնների ներկայ կրիտիքական
միջոցին նրանց ֆրանսիացի երկրպագուները
յանկարծ փոխում են իրանց լեզուն և սկսում
են հաճոյախօսութիւններ անել Անգլիայի հա-
ցէին, կանխել այն ամբողջ կեղտն ու հայնո-
յանքները, որ ամիսների ընթացքում թափում
էին անգլիական ազգի գլխին: Պէտք էր այժմ
օգնել բօշոններին, երբ նրանց զարմանալի քա-
ջութիւնը տեղի է տալիս անգլիական դիտե-
րին. բայց հէց այժմ, արդարութեան և ոյժի
միջոց պաշտարի այս օրհասի միջոցին, դուրս
են գալիս մի շարք ստորութիւններ, որոնք
շատ լաւ կը լինէր եթէ ծածկված մնային:
«Сбер. Купон» կոպիտը մի տառադրողի
մէջ այսպէս է բացատրում այդ արարքների
պատճառը:

Բօշոնները հիմք ունէին ամենից շատ Գեր-
մանիայի վրա յոյս դնել այն հռչակաւոր հե-
ռագրից յետոյ, որ Վիլհելմ կայսրը ուղար-
կեց Կրիգերին Զէմստին արշաւանքի ժամա-

գերծ, գողանալ... այն էլ այնպէս, որ բռնվի,
դատապարտում էին ամենքը Բայց այդ վարա-
դոյն էլ պատուելի: Բազում ահապին սենսա-
ցիա է գցել վերջերս բացված մի կազմա-
կերպված գողութիւն, որի գլխաւոր ներկա-
յացուցիչները հայեր են: Նօթքից գողացված է
զանազան ժամանակ 1,000,000 պուլը նաւթ:
Նօթքի համարեա կապ ունի բոլոր գործարան-
ների հետ, կամ առնում կամ տալիս է նաւթա-
յին մթերքներ, աւստի նրա շտապարանները
ծառայում են եղել, շնորհիւ իր գործակաւորի,
կենտրոնական կայարանի տեղը— Այդ գործա-
կաւորը, զանազան մուծ անձնաւորութիւն-
ների հետ պայմանաւորված՝ էժան գնով վա-
ճառում է եղել նաւթը— Բանտարկված են
մօտ 15 մարդ: Զափազանքած լուրեր շատ
կան, ամեն մէկը, օգտվելով անորոշ գրութիւ-
նից, իր թշնամու անունն էլ տարածում է, ա-
րատաւորելու դիտաւորութեամբ. այդ էլ Բա-
գուրի էտիկան է, բայց փաստն այն է, որ ըս-
պաւում են դեռ նոր ձեռքաւարկութիւններ
կանչվելու են բազմաթիւ վկաներ: Արդարադա-
տութիւնը հերոսական դեր ունի կատարելու:

Ուզիդ մի տարի առաջ սկսեց բացվել Ռիւ-
կու անփէշները, իսկ այս տարի թաւով երկրորդ
մեծ պրօցէսն է. եթէ այս անգամ եւս արդա-
րադատութիւնը չը ցնցէ ընթացած ջղերը, եւ
յաղթական գնացքով վերջ չը տա տեղական
վախճանալիքին, այն ժամանակ մենք պիտի
գեռ շատ պրօցէսների վկայ լինենք:

Անուշ. Բալանթար

Զնդամենը 539 թուրքի 92 կոպ.:
 Մխչեւ այժմ առաջել ենք 27,614 թ. 49%,
 չէկի, երեք ոսկի առաւիկ և 50 խապալան
 ա: Իտալարիկի ենք 26,500 թուրքի, 3 ոս-
 ոռաւիկ և 50 խապալանս լիբա: Մեղ մօտ
 ւմ է 1114 թ. 49 $\frac{1}{2}$ կ:

[illegible]

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՆ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵՍՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻ-ԱՂԱՄԱԼԵՍՆ

